*ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության*
*ծառայության պետ*
*Նելլի Դավթյանին*

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ փորձագետի (ադմինիստրատիվ օգնականի) կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ

(08.03.26 թ. - 15.06.26 թ.)

2026 թ. մարտի 8-ից 2026 թ. հունիսի 15-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՆԳՆ ՄՔԾ փորձագետ (ադմինիստրատիվ օգնական) Գայանե Վահանի Գրիգորյանի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

- ՄՔԾ պետի հրահանգով ներգրավված եմ եղել «Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի տրամադրման ենթակառուցվածքի պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) ծրագրին» առնչվող աշխատանքներում՝ նամակագրություն, թարգմանություններ, ՊՄԳ պայմանագրի շրջանակներում կնքվող համաձայնագրերի խմբագրում, մասնավոր գործընկերոջ թիմի հետ հանդիպումների օրակարգերի կազմում, մասնակցություն բանակցություններին, աշխատանքների ընթացքի վերահսկում և այլն:
- Ակտիվ մասնակցություն եմ ունեցել անձը հաստատող փաստաթղթերի դիզայնին վերաբերող բոլոր քննարկումներին, ապահովել կապը մասնավոր գործընկերոջ և հայաստանյան մասնագետների միջև:
- ՆԳՆ արարողակարգի վարչության հետ համագործակցությամբ կազմակերպել եմ ՆԳ նախարարի գլխավորած պատվիրակության այցը Նիդերլանդներ՝ մասնակցելու նոր կենսաչափական անձնագրի նախատպագրությանը:

- Պատրաստել եմ տեղեկանք տարբեր երկրների կողմից փախստականներին և քաղաքացիություն չունեցող անձանց տրամադրվող ճամփորդական փաստաթղթերի դիզայնի վերաբերյալ:
- Պատասխանել եմ նոր կենսաչափական անձնագրի դիզայնին վերաբերող թվով 3 հարցումների:
- Կազմել եմ ՊՄԳ-ին և վիզաների ազատականացման գործընթացին վերաբերող հարցերի պատասխաններ՝ ՆԳ նախարարի հարցազրույցների համար:
- Բազմիցս այցելել եմ ՀՀ տարբեր կետերում «ՀայՓաս» ՓԲԸ կողմից վարձակալված գրասենյակներ՝ ծանոթանալու շինարարության և վերանորոգման աշխատանքների ընթացքին:
- Հաշվետու ժամանակահատվածում կատարել եմ ՄՔԾ պետ Նելլի Դավթյանի այլ բազմաբնույթ հանձնարարականներ:

Հարգանքով՝

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ փորձագետ (ադմինիստրատիվ օգնական)

Գ. Գրիգորյան

«15» հունիսի, 2026 թ.

Հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքները

գնահատում եմ «գերազանց»

*ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության*

*ծառայության պետ*

*Նելլի Դավթյան*

*«15» հունիսի, 2026 թ.*